ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 27.12.2014թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ն. Մովսիսյան մարզպետի տեղակալ
Մ Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի ԲԿ ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

27.12.2014թ. **ժ. 12.00**

1. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման տարեկան ցուցանիշների, ինչպես նաև հողի հարկի և գույքահարկի շտեմարանների հետ տարվող աշխատանքների մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. Մարզի համայնքներում ապօրինի շինարարությունների կանխարգելման և վերացման , արձանագրված խախտումների և դրա դեմ տարվող աշխատանքների մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշնության վարչության պետ՝ Ա. ԴԱՎԱՅԱՆ/:

3. ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻ ամփոփիչ ելույթը 2014 թվականին մարզում կատարված աշխատանքների, արձանագրված ձեռքբերումների և բացթողումների մասին: Մարզպետի շնորհավորական խոսքը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

4. Հայտարարություններ

Դեկտեմբերի 27-ին Արագածոտնի մարզպետարանում կայացավ մարզխորհրդի տարեվերջյան նիստը: Օրակարգային հարցերին համապատասխան, լսվեցին համայնքների սեփական եկամուտների հավաքագրման տարեկան ցուցանիշերի, հողի հարկի և գույքահարկի շտեմարանների հետ տարվող աշխատանքների մասին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Նորայր Գալստյանի և մարզի համայնքներում ապօրինի շինարարության կանխարգելման ու վերացման մասին՝ քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Դավայանի զեկույցները:

Մարզպետ Սարգիս Սահակյանը ներկայացրեց ամփոփիչ ելույթը 2014 թվականին մարզում կատարված աշխատանքների, արձանագրված ձեռքբերումների և բացթողումների մասին: Նա անցնող տարին, ընդհանուր առմամբ, հաջողված համարեց:

Անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտին, մարզպետն ասաց, որ, թեպետ, տարեսկզբին ցրտահարություն, այնուհետև կարկտահարություն արձանագրվեց, նկատվեց նաև ոռոգման ջրի սակավություն, այդուհանդերձ, շնորհիվ գործընթացների ճիշտ և համակարգված կազմակերպման, գյուղատնտեսական արտադրանքի բոլոր տեսակների մասով, բացառությամբ ծիրանի, մարզը աճ ունեցավ:

Հաջողությամբ կազմակերպվել են կառավարության կողմից իրականացվող գյուղատնտեսական վարկերի տրամադրման, թունաքիմիկատների, դիզելային վառելանյութի, պարարտանյութի, սերմացուների ձեռքբերման ծրագրերը: Ցրտահարությունից տուժած տնտեսությունների ոռոգման ջրի վճարը զիջվել է 50%-ով, իսկ հողի հարկը ամբողջությամբ՝ 100%-ով:

Տարբեր աղբյուրներով, ընդհանուր առմամբ, մարզում ներդրումային ծրագրերը կազմել են 41 միլիարդ 11 միլիոն 88 հազար դրամ: Լայնածավալ գործընթացներ են իրականացվել կրթության, առողջապահության, սոցիալ-տնտեսական ոլորտներում, մարզային և համայնքային հանրային

նշանակության կառույցներում: Մարզպետը ըստ ոլորտների մանրակրկիտ ներկայացրեց իրականացված աշխատանքները:

Մարզպետարանի պատվերով հիմնանորոգում է կատարվել Փարպիի դպրոցում: Ծրագրեր են իրականացվել նաև քաղաքաշինության նախարարության պատվերով: Այսպես՝ հիմնանորոգվել են Արագածի թիվ 1, Ծաղկահովիտի, Քուչակի դպրոցները, կառուցվում են Վարդենիսի դպրոցը և Աշտարակի մարզադպրոցը: Մշակույթի նախարարության պատվերով էլ վերանորոգվել են Հարթավանի, Իրինդի, Զովունի, Ոսկեվազի եկեղեցիները: 34 միլիարդ 856 միլիոն 12 հազար դրամ էլ կազմել են բարերարների եւ այլ աղբյուրների կողմից կատարված ներդրումները: Այսպես. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ վերանորոգվել են Արմավիր –Գյումրի -Վրաստանի սահման /Քարակերտ- Գետափ/ 24 կմ հատվածը, կառուցվել եւ հիմնանորոգվել են Աշտարակ, Օհանավան,Կարբի, Մուղնի,Սասունիկ համայնքների խմելու ջրի ներքին ցանցը, Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ վերանորոգվել են Երևան-Աշտարակ միջպետական նշանակության ճանապարհի /Հյուսիս-հարավ/ 10,7 կմ հատվածը, Աշտարակ-Թալին միջպետական նշանակության ավտոճանապարհը /Հյուսիս-հարավ/, կառուցվել և հիմնանորոգվել են Ոսկեվազ,Ոսկեհատ,Օշական համայնքների խմելու ջրի ներքին ցանցը: Խմելու և ոռոգման համակարգերի կառուցման, վերանորոգման, հանրակրթական դպրոցների, մշակույթի տների, մանկապարտեզների և այլ կյառույցների հիմնական կամ մասնակի նորոգման, գազիֆիկացման, սոցիալական աջակցության և բազմաբնույթ այլ ծրագրեր են իրականացվել Հայաստանի սոցներդրումների, ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամների, IFAD-ի, Հայաստանի հաշմանդամների ,,Փյունիկ,, միության, ,,Սատար,, , ամերիկյան ,,Ամքոր,, և մեկ այլ բարեգործական կազմակերպությունների, ,Էներգախնայողություն, COAF հիմնադրամների,,,Շեն,,,Վորլդ վիժն ինթերնեյշն, ,,Դիակոնիա,,,,ADRA,, ,,Լայթ հաուս, ,,Քաունթերփարթ,, և միջազգային այլ կազմակերպությունների, հիմնադրամների, անհատ բարերարների հետ համագործակցությամբ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով, բազմազավակ ,զինծառայողների, ինչպես նաև զոհված ազատամարտիկների ընտանիքներին, որոնց պարբերաբար ցուցաբերվել է դրամական, առողջապահական, սոցիալական աջակցություն, հաշմանդամություն ունեցող 90 անձի տրամադրվել են սայլակներ և անհրաժեշտ այլ սարքավորումներ:

Նիստի ավարտին Սարգիս Սահակյանը շնորհավորեց գալիք տարվա կապակցությամբ, նոր ծրագրերի, նախաձեռնությունների արդյունավետ իրականացման հավաստիացումներ տվեց և բոլորին մաղթեց **բարեկեցություն, երջանկություն, խաղաղ ու ստեղծագործ կյանք**: